

- դիւզ տեղ, դիւզին տակին էրկու ծառ, էրկու ծառին տակին էրկու գետ, էրկու գետին տակին էրկու նով, էրկու նովին տակին մին ճեղաց, ճեղացին տակին մին թումբ = գլուխը (ճակատը աչքերը, քիթը եւ այլ մասերը):
- 73. Վէննէր չոնի, քինըմ ա, պերան չոնի, կոլ ա տամ = գետը:
- 74. Ազուաւը քինըմ լիլիսալիս, ճոտերը հետան ծովովալիս = մեռելի տանելը:
- 75. Եր ինիմ ծառը, ձէն տամ ձեռը, մեռած մարթին կենդանութիւն = աքաղաղի կանչոցը:
- 76. Տափակը տիակին, էրգանը ծակին = աղօրիք ձեռքի, երկանք փայտի կոթով:
- 77. Ինքը քաղցը ա, ամմա օտվել չի = քունը:
- 78. Մին քէթ օնի, քառասուն աչք = արեխը:
- 79. Մաղը քաշիմ սարը կեա = ուղտի վզից կապած թուրը (նոխտան):
- 80. Էս հի՞նչն ա ամեռնը կալըմ ըն, ձմեռնը ետ անըմ = չորաթանը:
- 81. Էս հի՞նչն ա, ծոռ կրեչի, դիւզ կը քինա = գութանը:
- 82. Կըրմեռ հեաքի հչորդանըս կեամ, ծովան ըմ կեամ, բա խէ՞ ցամաք ըս, տահան ըմ կեամ = դալանի ծուխը:
- 83. Ձեռքաւ փոնիմ, փաղաւ կտրիմ = ջրաղացի ջուրը:
- 84. Կըրիւր կտրեցի, սերտը հնեցի, ջուր տալի խմեց խօսել սկսեց = փետուրի գրիչը:
- 85. Անջուր տեղ ծառեր փսած, ճղներ օնի, տրեւ չոնի = մարալի եղջիւրները:
- 86. Լոխճու կեց ա տամ գրթարըմ, ամմա ինքըէհա տկուրա = ասեղը:
- 87. Մթէն տոն, հարամին մեչին քոն = հրացանը գնդակով:
- 88. Ծիք տամ նի քցիմ, ծիք տամ տիւս քցիմ = երկայն կօշիկներ:
- 89. Գեռոգ եղնը փախալ, կեարմիւրը մնաց նստած = կրակը:
- 90. Էն հի՞նչն ա, վէր կտոց օնի, կլոխ չոնի = սիւլուկը:
- 91. Էն հի՞նչն ա, թեւեր օնի թեփուռ չոնի = գէշերամուկը:
- 92. Սեւա, ազուաւ չի, թոչըմա, դուչ չի, վէտ (հոտ) ա գեղըմ թուրա չի = բղէզ:
- 93. Գլին հարիմ, արուճ անի = մկրատը:
- 94. Լպտտիմ ծակնի եր տամ = թելը ասեղ անցնելուց:
- 95. Պկին հոփ տամ, փորը թափիմ ծովովա = սաղը, թատը:
- 96. Աքըրմ, բաքըրմ, քեաքիւլատ փոնիմ ծիք տամ = գաղարը, բողկը, ճակընտեղը:
- 97. Սարին գլխին խտըմ հարում, խորում խորում թուրուլ տամ, վէչ մին հեյվան նեստա մուտանըմ չի = գլխի մազը խուզելուց:

- 98. Կեարմիւր էալուլս պողաւ լիւր = նուրը:
- 99. Մսի չանթա պրինճաւ լիւր = բերանը:
- 100. Մսի լիւլա, ըրկաթի դիւլա = լյուլա քեարաք:
- 101. Քչերը գեաղա, ցրեկը աղա = վերմակը, դոչակը:
- 102. Յիրեկը գեաղա, քչերը աղա = աւելը:
- 103. Մեղ մինն օնինք իրեք մնանի, վէր նի կը կեաս վա՛յ վա՛յ կանի = դաշնամուրը:
- 104. Էտ հի՞նչն աման ա փրսը վէր տինիմ լցնի, պօրը ետ տինիմ տօտակվի = գլխարկը:
- 105. Լիւզուն մէջքին, հինչ վէր ասի կհվատաս = կշեռքի միւրը:
- 106. Մեղ մինն օնինք օխտը լիւզվանի, կեռէք չոնի մարդ կըկծի = բանջարը, աղինջը:
- 107. Մեղրան քաղցը, արկաթան ծանդը, վէչ դուքանըմ կծակվի, վէչ բաղարըմ կանուկի = քունը:
- 108. Գլխին կրակ, կրակին տակին խոտ, խոտին տակին փաղ (փայտ), փաղին տակին ջուրը պլթպլթըմ ա = դալանը:
- 109. Տափան պեցուր տոն չինած, վէչ տոնը օնի, վէչ ախուչիա = շերամի բոժոժը:
- 110. Էն հի՞նչն տոն ա, չինողն ուրախանա, մէջը մտնողը չիմանա, հարուստն ու աղքատը ունենա = դազաղը:
- 111. Լուն թուաւ կարպետին, ձէն տվաւ վարպետին, ձէնը քինաց Հնդստան, ինքը մնաց ձեռին = հրացանը խփելուց:
- 112. Վէչ չիթ ա, վէչ շալ ա, ինքը անծալվըծալ ա, մէջի նստողը անհամար ա = երկինքը աստղերով:
- 113. Խալիչա օնիմ թափ տալ չի լինիլ, վէսկի օնիմ հմբարել չինել = երկինք եւ աստղեր:
- 114. Նեղ քյուչ ա, մէջը փուչ ա = հրացան:
- 115. Փտած փատը փորեցի, ասլանը մէջը թաղեցի = թուրը:
- 116. Ալաս փալաս, անըմը տամ չիմանաս = փալասը:
- 117. Իրեք հուքի կարմունջաւ անցկացին. մէկը տեսաւ, ոտքով անցաւ, միւսը տեսաւ անտք անցաւ, երրորդը ոչ տեսաւ, վոչ ել ոտքով բայց անց կացաւ = մայրը, յի յորդին շալակած:
- 118. Սեւ սալ ա, սիպտակ սալ ա, մէջինը կըպլպա = աչքը:
- 119. Հենդ ախպերք ըն, մինը ցելա ա կրում, չորսը պատն դնում = գուրբա գործելու ջաղերը:
- 120. Էս անկիւն լիւզ տա, Էն անկիւն լիւզ տա քինա պատին դոչ տա կաղնի = աւելը:
- 121. Հեաքվան փոնիմ տափաւը տամ = խինք:
- 122. Վարիմ հաճար, փանի պենջար, չոչ տա շմալ, դեղեն կճոճ = դգմենին:

- 123. Օրաղաւ թխեցի եօնջին, ձէնը քինաց Գեանջին = որոտում:
- 124. Էն հի՞նչն ա վէր մեչան ա հանըմ = ձմեռուկը:
- 125. Վաղ ա վաղ ա, կեոտին հարիւր կեղ ա = վերատու (ոստայնի):
- 126. Էրգան շմալ չոք չոնի = ձայնը:
- 127. Լիւս ըրա քթիւր նի պրանի = կայծակի հարուածները:
- 128. Երգինքը հով, գեաինքը ծով, եղնը ծնից կով = Աղամից եւան:
- 129. Քչերաւ քչըհանա ձեր դոնը հյուլատիմ = չմուշքներ (կօշիկ):
- 130. Իմ հօր տղան իմ աղբեր չի = խորթ եղբայրը:
- 131. Մին փոսի երա հարիւր փոս = մատնոց:
- 132. Մին ծառ օնիմ տասներկու ճղանի, մին ճղանը իրեսուն տրեւ, տրեւին մինը սեւ, մինը սիպտակ = տարի, ամմա, ցերեկ եւ գիշեր:
- 133. Ծովան մին դուչ ա տիւս կեամ, վէչ մէս օնի վէչարիւն = շունը:
- 134. Վէր քաշիա չաթվատ չի կեալ, ամմա վէր պրցցնիս, ամալ չի կեալ = կրակը:
- 135. Հեարը օրուրոցըմը, տղան քինաց բաղար = վարունգը:
- 136. Էն հի՞նչն դուչ ա, վէր վէնը ծոնդան պեցուր ա = մորթիւր:
- 137. Էրկու բաղեա մածնըմ մին մին վէթէս = աչքերը:
- 138. Մեղ մինն օնինք կիտուրցնիք կը խօսի, ամմա վէր մորթինք արիւն չի կեալ = դուռնան:
- 139. Էծը եր իլաւ քարը, քարը կերաւ, եղ չոնց պաներ թրքեց = ձէթը ձիթիան քարի տակից իր քուսպով:
- 140. Էս հի՞նչն ա, վէրքան տաշըմ ըմ հստաքարի տակից իր քուսպով ըմ հստաքարըմ ա, վէրքան կտրըմ ըմ իրգընահըմ = ջրհորը:
- 141. Էն հի՞նչն ա, ջուր կիմի կիւզիլ չի = հաւը:
- 142. Ըչխարքիս տակին մին մարդ, ըռաջին մին սինի, սինուն մաչին մին դմակ, հինչքան դմակին մաչին մին տենակ, վէչ սիկտրըմա, վէչ տմակն ա կլիւրմ, վէչ սինին ա լցնվում = երկրագունդը միջի մեռնողներ եւ ծնունդներ:
- 143. Էրգան ա սաթի նման, պոչը խաչ երկաթի նման = կաշաղակ:

Հաւաքեց
Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ
1874-1920:



Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Բ
Ս Տ Ա Մ Պ Օ Լ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ն
Ե Ր Ե Մ Ի Ա Չ Է Լ Ե Պ Ի Ի Ք Ե Օ Մ Ի Ի Ր Ճ Ե Ա Ն

Գ Լ Ո Ւ Խ Զ.
(Շարունակութիւն):

Տող 385:
«Ծովեզերօքս ի վեր գրնամը՝
Մինչ հասնիմք ի Գուռի չէշմէն այն».

Տող 386:
«Գուռի չէշմէ գիւղս ելցուք...»

Տող 390:
«Չիք տանիկք, Հայք ժամատամը՝
Յոյնքն քիլիսաւ սուրբ տիմեղրիան».

Օրթագիւղէն մեկնելով կու գան Գուռու-
չէշմէ (չորաղբեր) գիւղը, որուն համար կ'ըսէ
Թէ «Հայեր կան հոն ժամատունով մը»,
ուրկէ կարելի է դատել Թէ 1661—1680 տա-
րիներու միջոցին արգէն հոն հայկական մատու-
մը գոյութիւն ունեցած է ուստի եւ Հայ բնակ-
չութիւն:

Այս մատուռը վերաշինուած է 1798ին,
որովհետեւ Սարգիս Գալիբ Սարաֆ Յովհան-
նէսեան իր Տեղագրութիւն Ստամպուլի ձեռա-
գիր աշխատութեանը մէջ այդ մասին կ'աւանդէ
հետեւեալը:

«Եւ յետ Մէթթէրտարին է գիւղն այն,
որ կոչի Գուրուչէշմէ: Գոյ ի գիւղի աստ եկե-
ղեցի մի Հայոց՝ յանուն Երեւման Խաչի, որ ի
հիմանէ քակեալ շինեցաւ ՌՄՍԷ (1247 +
551) 1798 փետրվարի ԻԷ. եւ օծեալ ձեռամբ
Յօհաննու արհի եպիսկոպոսին, կոչեցաւ Ս. Խաչ
Ըստ առաջին անուանակոչութեան իւրոյ».

Այս եկեղեցիին յիշատակութիւնը Հ.
Ղուկաս Ինձիճեան ալ իւր «Ամարանոց Բի-
զանդեան»ին մէջ¹ կը գրէ սապէս՝

«Իսկ եկեղեցի՝ Հայկական ազգին,
ի մէջ բնիկ գեղջ՝ յանուն սուրբ խաչին».

Իսկ վերաշինութեանը համար Գիւս Գա-
հանայ Աղանեանի «Դիւան Հայոց պատմու-
թեան» մէջ² կը կարգանք սապէս,

¹ Ամարանոց Բիւզանդեան, վերնակի 1794, էջ 128:
² Դիւան Հայոց պատմ., Գիւրբ ժ. էջ 463:

«ՌՄԽԸ. 1798 փետրվար 27. Ի Կ. Պոլսի Ս. Նշան եկեղեցի Ղուբու 2 էջմէի նորոգ շինեցաւ Ի Տիմանէ, հոգաբարձութեամբ բարեպաշտ Չոպան ամիրային, եւ էօժ զնա Յովհաննէս եպիսկոպոս կոստանդնուպոլսեցի (յետոյ պատրիարք) Ի Տնտեսի կիւրակէին»:

Այս տողերուն մէջ եկեղեցիին անունը Ս. Նշան ըստած է որ կարեւորութիւն չունի, բայց յայտնի է թէ Գուբուէջմէինն է եւ կ'իմացնէ նաեւ թէ վերաշինութեանը սատար ու հոգածու եղած է Չոպան ամիրայ այսինքն Հովուեան:

Ըստ այսմ՝ եթէ ընդունինք որ այս եկեղեցին հաստատուած է 1661էն յետոյ, գոնէ դէպի 1670—1675ի ատենները անոր վերաշինութիւնը կատարուած կ'ըլլայ ճիշդ 131 տարի առաջ, եւ կ'ունենայ երկու եւ կէս դարու հնութիւն:

Բայց երկրորդ վերաշինութիւն մ'ալ ունեցած է 1834ին Երկանեան ամիրայի նախաձեռնութեամբ եւ կը մնայ այնպէս:

1919 յուլիսին մեծ հրդեհ մը պատահեցաւ Գուբուէջմէ եւ քիչ մնաց՝ եկեղեցին այրէր. բայց Հայ Արիներու գերմարդկային ճիգերու շնորհիւ ազատ մնաց հրդեհէն, ինչպէս գրած եմ այս մասին «Սոր կեանք» թերթին մէջ¹:

Գուբուէջմէ թաղը ունի իւր երկսեռ վարժարանը Ս. Թարգմանչաց անունով, որ կը գտնուի քիչ հեռուն Առնաուտքէոյի մէջ եւ բացուած է 20—25 տարի առաջ:

Գուբուէջմէի եկեղեցիին հետ սակայն կ'արժէ յիշատակել քանի մը կարեւոր դէպքեր, որոնք պոլսահայ ժամանակակից պատմութեան մէջ զուրկ չեն նշանակութենէ:

1816—1820 Անդրիանուպոլսեցի Պօղոս պատրիարքին օրով երբ Մայր Եկեղեցին իր յարակից մասերով կը նորոգուէր, Ազգային պատրիարքարանը քիչ մը ատենի համար փոխադրուեցաւ Գուբուէջմէ² եւ հոն աեղի ունեցան Կաթողիկէ Հայերու հետ դաւանական համաձայնութեան այն նշանաւոր խորհրդակցութիւնները, որոնց նախագահած է Պօղոս պատրիարք, անձամբ նաեւ երեւելի ազգայինները, եւ Տիւզեան մեծանուն 2 էջպիները³:

¹ Պոլսի Տարի, Կ. Պոլսի Ա. տարի, թիւ. 246, 18 յուլիս, 1919:
² Պատմ. Հայոց, Ա. Պերպերեան, էջ 84:
³ Անթ. էջ 184 եւ Ազգայնագրութ. Օրմանեանի. Եղմ., էջ 3448:

Այս առթիւ աւելորդ չըլլայ ըսել թէ կաթողիկէ վարդապետներ քանիցս ալ պատարագած են այս եկեղեցիին մէջ¹, նախ քան իրենց առանձին եկեղեցի ունենալը:

Գուբուէջմէի մէջ է որ ապրած են միշտ ազգային մեծ բարերար Տիւզեանները, Օսմ. կայսրութեան ամենահաւատարիմ կերպով ծառայող այդ անուանի Հայերը, որոնք դժբաղդաբար վարձատրուած են խիստ տխուր կերպով, ինչպէս պատմած եմ Ծանօթագրութիւններուս Ա. Հատորին 293—297 էջերուն մէջ:

1919 յուլիսին Տիւզեանց ծովեզերեայ ապարանը այրեցաւ բոլորովին. անհետ եղաւ Ի սպառ այդ պատմական տունը, որուն երգիքին ներքեւ Հայ գիտուններ վայելած են երբեմն մեծ բարերարութիւններ ու օժանդակութիւններ:

* * *

Այս եկեղեցիին բակը թաղուած են Կաղզուանցի Յովհաննէս պատրիարք († 1799) նաեւ Տեղապահ Նիկողոս եպիսկոպոս Աղասեան, որ վախճանած է 1874 փետրվար 11ին երիտասարդ հասակի մէջ:

Այս վերջինը շիրիմ չունի, բայց Չաքարեանի վրայ կանգնած է շքեղ դամբարան, որուն Արձանագրութիւնը հետեւեալն է.

Հանգեաւ յամի Տեառն 1799 եւ Հայոց ՌՄԽԸ եւ մարտի ԺԱ.

«Մեծ վարդապետըս այս մեր զգօն՝ գերահոչակ եւ զգաստ.

Ծնեալ յերկրին՝ Կաղզվանայ՝ ութսուն ամեայ հանգեաւ աստ.

Ի Փօզուզնց՝ համեստ զարմէն՝ մաքրապնունդ բարեբաստ.

Դեռ մանկութեան՝ սուրբ հաւատով բնաւորեալ ճոխ իմաստ:

Զներտ հաւատն ուղղադաւան՝ ետես ի սա Սուրբ Հոգին.

Կոչեաց ի Սուրբ Էջմիածին՝ լուսակառոյց նոր յԱդին.

Արար զսա անդ միաբան՝ հայրապետացն առ ոտին.

Եւ փայլեցոյց գերափառօք՝ զետ զարուսեակ առուտին.

Սրբոյ զահոյս ժիր գործակալ միշտ ուր ուրեք յաջողակ.

¹ Պատմ. Հայոց, Ա. Պերպերեան, էջ 134:

Գեղեցկադէմ՝ անազնաձայն՝ եպիսկոպոս շնորհունակ:

Էր բանախօս աստուածաբան եկեալ պոլսոյս նուիրակ.

Լուսաւորչիս դաւանութեան ուղիղ մտօք դաստիարակ:

Ի գործ կրկնակ նուիրակութեան բարուք ծանեան բարեհարգ.

Զաքարիա արհեստասնծս եղին պոլսոյս պատրիարգ:

Հրոչակեցաւ յոյժ ազգասէր եւ բարեբախտ գերայարգ

Շինեալ զոմանս եկեղեցիս եւ հիւանդաց երկու յարկ:

Յոյժ ճոխացոյց շատ դպրատունս յորս հաստատեաց վարժապետ,

Հասոյց գեթմեակ եպիսկոպոս եւ չորեսին վարդապետ,

Զանայր զուսումն ճոխեւ ազգիս նախնի սրբոց յարհանգէտ.

Պահեաց հանգիստ զազգ մեր տարով քսան եւ վեց կացեալ տէր,

Զերդ Ս. Սահակ գփայտ վըշտաց հոգրս հայոց բարձեալ յուս,

Յահէն պետիս՝ բոլոր հերձուածք բերանափակ տային խոյս.

Ազդամբ հոգոց գիտեալ զիս, մահ խընդրեաց թաղիւ շիրմիս կոյս.

Ակն ունելով Սուրբ աղօթից՝ տամբ ողորմիս շնորհալոյս»:

1899ին Օրմանեան Ս. պատրիարքը Գուբուէջմէի եկեղեցիին մէջ մեծահանդէս պատարագեց Չաքարիա պատրիարքին մահուան հաւերամեակին առթիւ եւ անոր կենսագրական ռիւրակներուս դամբանականով: Ծանօթագրութիւններուս Ա. Հատորին 255—262 էջերուն մէջ խօսած եմ Չաքարիա կաղզուանցիի մասին:

«Սուրհանդակ¹» թերթը հրատարակեց այն ատեն սոյն տապանագիրը, եւ յետոյ ես ալ զայն լոյս ընծայեցի, իմ «Տապանագիրք ալ զայն լոյս ընծայեցի, Կ. Պոլսոյ» աշխատութեանս մէջ²:

¹ Սահակագր., Կ. Պոլսոյ, թիւ 60, 17 մայիս 1899:
² Բազմակէտ, 1918 թուին (ապրիլ 1923ին) էջ 169:

Եկեղեցին ունի քանի մը յիշատակներ հին, որոնց մէկն է՝ 1. փրկչական պատկեր մը որ կը կրէ 1798 նոյմ. 1 թուականը, հետեւեալ արձանագրութեամբ՝

յիշատակ է պատկերս խուռուէջմէու սուրբ Նշան եկեղեցոյն ի կողմանէ արեւմտեան մարկոսէս: — 1798 նոյեմբեր 1:

2. Համակ արծաթ գաւաղան մը, չորս կտորէ բաղկացած, որուն առաջինին վրայ բոլորապէր փորագրուած է երկու տող սապէս՝

յիշատակ է զաւագանս ի խուռուէջմէի Սուրբ Խաչ եկեղեցոյ. սպասանորացն ի դուռն Տիւզեան Յօհաննէս Ալէլէպիյին. յամի Տեառն 1811:

3. Արծաթ սրբատուփ մը սրտածեւ, ծաղկադրուագ կափարիչով եւ ներքեւը 7 տող երկաթագիր փորագրուած յիշատակարան, որ է՝

յիշատակ է սրբատուփս, հանգուցեալ Զերեզեան Յարգի Դասպար ամիրայի հոգոյն² ի Դուռ սուրբ Խաչ եկեղեցոյ ի Լուրուէջմէ 1821 եւ յօգոստ. 15:

4. Կը գտնուին հոն ուրիշ երկու պատկերներ եւս, զորս 1829ին նկարած է եղեր ինչպէս կը կարդանք վրանին՝ Պէյօղլուցի Ներսէս անունով դպիր մը:

Եկեղեցիին մուտքի դրան մօտ ճամբուն վրայ ատենօք շինուած է աղբիւր մ'ալ որ 1780 թուականը կը կրէ եւ որ կայ ցարդ հետեւեալ երկաթագիր վերտառութեամբ՝

Յիշատակ է. Այս աղբիւրս. Նազըլ Խաթունի. Կողակից. Բաբագեան. Պետրոս Ամիրայի. Եւ որդոյն Մկրտիչ Ամիրայի. Յիշէք. միով. Հայր. մէրիւ. Ի թիւն Բրիտոսի 1780:

¹ Այս Յօհաննէս Ալէպիին հիմնադիրն է Գարթապ վարժարանին եւ Արշարունեաց ընկերութեան, ինչպէս գրած եմ Ծանօթագրութիւններուս 293րդ էջին վրայ:
² Նահատակուած 1821 ապրիլ 29ին:

Եկեղեցիէն բաւական հեռու գիւղին մէկ բարձունքին վրայ կը գտնուի Հայոց Գերեզմանատունը շատ անխնամ թողուած, ուր հազիւ կրցած եմ կարգաւ երկու երեք Տապանագիրք մին՝ Սիրուն օղլու Սարգիսի դուստր Էլմաս ՌճՁԱ = 1732 թուականով. միւսը՝ «մահ-տեսի Գրիգորիսի ՌճՁԵ = 1736 թուով եւ ուրիշ անընթեռնելի մ'ալ 1740 թուակիրով:

Այս Գերեզմանատունին մէջ կը հանգչին նսհատակ Տիւզեան 2էլէպիները, ինչպէս նաև անոնց բոլոր ազգականները եւ ունին մասնաւոր թաղ մը երկամասաւոր խիստ փառաւոր շիրիմներով, որոնք բաց ծովէն իսկ ուշադրութիւն կը գրաւեն:

1912 մայիս 24ին Գուրուչէշմէի եկեղեցւոյ քահանայն, Տիւզեանց շիրիմներու նկարագրութիւնը իմ խնդրանքիս վրայ յղած էր ինձ յատուկ գրութեամբ, զոր կը ներկայացնեմ հոս նոյնութեամբ:

Տիւզեանց գերդաստանի մահարձանները:

1 հատ գլանաձեւ կոթող. երկ. 1.20 մեթր. տրամագիծ 1.30 մեթր, գլուխին վրայ փորուած ութ թեւով խաչ. առանց արձանագրութեան:

1 հատ գլանաձեւ կոթող. երկ. 1 մեթր. տրամագիծ 1.30 մեթր. առանց արձանագրութեան:

1 հատ գլանաձեւ կոթող, 1.80 մեթր տրամագիծով առանց արձանագրութեան 1 մեթր. բարձրութիւն, գլուխը հարթ:

Խոշոր կոթող 'ը՝ երեք երեսներով, իւրաքանչիւր երեսին լայնութիւնը 1.11 մեթր: Աւելի լայն պատուանդան մը որուն բարձրութիւնը 72 սանթիմեթր, կոթողին բարձրութիւնը (պատուանդանէն դաս) 1.80 մեթր. — իւրաքանչիւր երեսին վրայ շինուած է սեղան մը որուն վրայ կիսաբոլորակ մը եւ ասոր վրայ սկիհ մը երկու կողմէն բռնուած թուղթի թեւերով: Երեք անկիւններուն վրայ կան բարձրաբանդակ երեք մականներ գլուխը վար դարձած: Այս եւս արձանագրութիւն չունի: Մականները ունին իրենց վարի ծայրը խարազանի փունջ մը:

Երկար տապան մը, 1.67 մեթր երկայնութիւն. — 1.15 մեթր բարձրութիւն 2 ճակատներու լայնութիւնը 0.75 մեթր:

Իւրաքանչիւր երկայնութեան ճակատին վրայ բարձր քանդակուած են երկերկու խարազաններ. — իւրաքանչիւր լայնութեան ճակատի վրայ՝ թեթեւ խորութեան մէջ՝ բարձր քանդակուած են մէյմկ սափոր՝ պսակած ձեւի մէջ: Արձանագրութիւն չունի:

Քառանկիւն կոթող մը չորս հաւասար երեսներով. բարձրութիւն 1.10 մեթր. — իւրաքանչիւր չորս երեսներու լայնութիւնը 0.60 մեթր. գլուխը հարթ:

Կան նաև չորս հատ փոքր բուրգեր, չորս տափարակ հաւասար երեսներով, 0.65 մեթր բարձրութեամբ, ունին անընթեռնելի արձանագրութիւններ:

Գուրուչէշմէի նաւամատոյցին դէմ կայ փոքրիկ կղզեակ մը, որ սեպհականութիւնն էր արքունի ճարտապետ Սարգիս պէյ Պալեանի եւ ուր կը բնակէր ինքը, հոն նա յանկարծամահ եղաւ 1899 նոյեմբեր 7ին: Իւր եղբայրներէն Նիկողոս Պալեան վախճանած է 1858 փետրվար 27ին, իսկ Յակոբ Պալեան 1875 հոկտ. 30ին:

Տող 393: — «Առնաւուտ Բէօյ» Գուրուչէշմէէն անմիջապէս յետոյ եղած գիւղը՝ ուր Երեմիաի ատենները թէեւ բնաւ Հայ բնակչութիւն չկար, բայց այժմ բազմացած է՝ Առնաւուտքէօյ, Գուրուչէշմէի հետ միացեալ թաղ մը կը կազմէ եւ հոս է Ս. Թարգմանչացի երկսեռ վարժարանը:

Զինադագարէն վերջ Գուրուչէշմէի եւ Առնաւուտքէօյի միջեւ ծովեզրին վրայ բացուցաւ Հայոհի-Որբուհիներու համար տուն մը, ուր անձնուէր Տիկիներու խնամակալութեամբ Հայ աղջկաներ ձեռագործ կ'ուսանէին եւ կը դաստիարակուէին:

Առնաւուտքէօյի բարձունքին վրայ կը գրտնուի Ամերիկեան Գօլէճը ուր շատ տարիներէ ի վեր կրթուած են եւ կը կրթուին բազմաթիւ Հայ աղջիկներ:

Տող 434.

«Այլ յառաջ հիսար կանգնի՝ Որ ուռումէլոյ է կողման»:

Բուժէլի Հիսար հասնելով՝ Երեմիա բնաւ յիշատակութիւն մը չ'ընէր Հայերու, կ'երեւի թէ իր ատենը հոն Հայ բնակչութիւն չկար. բայց Հ. Ղ. Ինձիճեան իւր «Ամարանց»-ին մէջ այս մասին կը գրէ՝

«Թաղ մերոյ Ազգին՝ արտաքոյ ըբրդին, Սրբուհի սանդուխտ՝ իւր եկեղեցին, դժուարին իւր ելք՝ զառ ի վայր լերին, Այլ օղն աննման՝ բազմեալ յայն գահին»:

Եւ Սարգիս Գպիւր Սարաֆ Յովհաննէսեան իւր «Տեղագրութեան» մէջ անոր կը նուիրէ Տեառեալ տողերը՝

«Եւ դոյզն ինչ յառաջ գնացեալ, կայ ան- դանօր կայացեալ Ռումէլի Հիսարին, որ է Նանդէպ Անատոլեան Հիսարին...: Աստ զոն Հայք արտաքոյ պարսպին ընակեալը ի կողմս զառ ի վերին, եւ ունին ժամատուն յանուն Սրբուհոյ Սանդիսոյ կուսին»:

Որով յայտնի կ'ըլլայ թէ Բ. Հիսար Հայ եկեղեցեակ մը ունէր գոնէ 18^{րդ} Գարու վերջերը, քանի որ Հ. Ինձիճեանի գործը կը կրէ 1794 եւ Սարգիս Գպիւրինը 1800 թուականը:

Կ'երեւի թէ Ս. Սանդուխտ եկեղեցին 1816ին կը վերաշինուի, բայց շուտով կը քակտուի, ինչպէս կ'աւանդէ Ա. Պերպերեան իւր ժամանակագրական ցուցակին մէջ գրելով, 1816 նոյեմբեր 30. — Բակեցաւ նորաշէն եկեղեցին Հիսարու եւ արտոյցաւ մատնեցան ի թի նաւատեղեաց²:

Յայտնի չէ թէ ինչո՞ւ համար քանդուած է այս եկեղեցին եւ վասն էր անոր շոգարարձուն է անիկ (ձանիկ ամիրայն է) կ'աքսորուի եւ եկեղեցիանները կը բանտարկուին թիարանը:

Սա գիտենք՝ որ Ս. Սանդուխտ 1856ին ձանիկ ամիրայի կտակով³ նորէն կը շինուի քահանայ թէեւ փոքրիկ, եւ օծումը տեղի կ'ունենայ 1856 յուլիս 29ին Յակոբոս պատրիարքի օրով: Կանգուն է այն ցայսօր եւ իւր մօտիկը ունի թաղային երկսեռ վարժարանը, Ս. Թա- ղէնուսան անուն:

1 Ամարանց Բէ-ճե-ճե-ճե, վեճե-ճե-ճե, 1794, էջ 144:
2 Պարս. Հայոց, Ա. Պերպերեան, էջ 452:
3 Տարեցոյց ԱԳԷ. Հիւսիս-արեւմտեան, 1901, էջ 244:

Ամարանային օդափոխութեան սքանչելի վայր մ'էր. Հիսարի Հայոց թաղը՝ որուն համար Սարգիս Գպիւր կը գրէ՝ «Եւ օղն՝ ուր ընակին Հայք, յոյժ քաղցր է. վասն զոլոյ տեղոյն բարձրախայնաց, եւ հանդիպակաց շնչման հողմոյն հիւսիսաց»:

Հին ատենները երեւելի ամիրայներ կը բնակէին այն տեղ:

Գպրոցին օգնութեան համար ընկերութիւններ հաստատուած են հոն երբեմն, եւ լատինական միութիւններ ալ տեղի կ'ունենային Ազգ. վարժարանին մէջ 1918ի զինադագարէն յետոյ, բայց այժմ լուրջիւն լուրջեանց ամենայն ինչ լուրջիւն է հոն:

* * *

Բ. Հիսարի մէկ ուրիշ բարձունքին վրայ կանգուն է, Վոսթորոսի վրայ իշխող, Ամերիկեան գեղեցկագիւր Ռօպերթ Գոլէճին հսկայ շէնքը, ուր երեք քառորդ դարէ ի վեր բազմաբան Հայ պատանիներ ուսում ստացած են եւ կը ստապատանիներ ուսում ստացած է Պերճանան: Հոն հայերէնի դասախօս եղած է Պերճանան, բան Յակոբ ճէճիզեան (այժմ հանգուցեալ), որուն փոխանորդած է այժմ Պրոֆ. Արթուր Տէր Յակոբեան:

Բուժէլի Հիսարէն ո՞չ շատ հեռու՝ կայ նաև Պոյաճըքէօյ (ներկարարի գիւղ) կոչուած վայրը, զոր երեմիա 2էլէպի չէ յիշեր, ո՞չ ալ Ինձիճեան եւ Սարգիս Գպիւր չ'են խօսիր անոր մասին, բայց կայ հոն Հայկական թաղ մը եւ եկեղեցի գեղեցկագիւր ու բարձրագիւր:

Պոյաճըքէօյի մէջ Հայերը հաստատուած պէտք է ըլլան գէպի անցեալ դարու երկրորդ քառորդին, զի եկեղեցին յանուն «Ս. Երից Մանկանց» կառուցուած է նախ 1840ին ծախիւք սեղանաւոր Միսաք ամիրայի Միսաքեան, որ թաղուած է եկեղեցիին հարաւային կողմը՝ հետեւեալ արձանագրութեամբ:

«Միսաքեան տոհմին աստ հանգչի պարժանք ամիրայն Միսաք Սեղանաւոր ճոխ, մեծացաւ փառօր յայս մայրաքաղաք. Հայր բարեգործով, ազգիս բարերար, սիրող աղքատաց. Զանուն իւր անմահ եթող յայս տաճար, զոր էին ձօնեաց: 1790—1856:

* * *
4*

Միսաքեան Միսաք ամիրայ՝ որուն ամբողջ կեանքը, սոյն քառեակ տողերը խիստ համառօտ բայց պերճախօս կերպով կը պատմեն, մեռած է 1856 յունվ. 31ին 66 տարեկան¹: Սա որդին էր Պետրոս Ամիրայ Միսաքեանի՝ որուն յիշատակին համար ինչը շինել տուած է աղբիւր մը որ եկեղեցիին փողոցը կը գտնուի եւ ունի հետեւեալ արձանագրութիւնը երկաթագիր դրուագուած.

“Ակնեցի Միսաքեան հանգուցեալ Պետրոս Ամիրայի հոգւոյն համար շինեաց աղբիւրս զայս բարեյեշատակ որդի իւր մեծապատիւ Միսաք Ամիրայ. յամի Տեառն 1854 յունիս 29:”

Երկրորդ աղբիւր մ'ալ շինել տուած է եկեղեցիին փակը, հետեւեալ բոլորագիր փորագրուած տողերով,

“Աղբիւրս յիշատակ է Միսաքեան Միսաք Ամիրայի 1854 յունիս 29

Պոյաճը գիւղի Ս. Երից Մանկանց եկեղեցին ունի համանուն նախակրթարան մը, ուր կը յաճախեն թաղին երկսեռ մանուկները: Ունի եւ գեղեցիկ շէնք մը հայ եկեղեցականներու իբր Ամարանոց:

Ազգ. գերեզմանատունը կը գտնուի գիւղին ծայրը, որմնապատ եւ խնամուած:

* * *

Անշուշտ այս Միսաք ամիրայի ազգականն ըլլալու էր այն վարդերես աղա Միսաքեանը որ 1847ին Պուրթէն մէջ հիմնած է իր անուանակեր վարժարանը ինչպէս կը գրէր Տէրոյեանց պատուելի²:

Տող 444. — “Էմիրկիւն” բոլորովին թրքարնակ գիւղ մը, բայց Ազգ. ժամանակակից պատմութեան մէջ ունի յիշատակութիւն մը, որովհետեւ Էմիրկէն գիւղի իր ծովեղերեայ ապարանքին մէջ էր՝ որ արտաքին գործոց վերակացու Ալի Էֆէնտին, 1847 մայիս 7ի Զորեքշաբթի օրը, յատկապէս իր մօտ հրաւիրեց (Զուհաճեան) Մատթէոս պատրիարքը ու երեւելի

¹ Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցի 1900, էջ 36:
² Հայաստան, Կ. Պոլիս, Բ. տարի, թիւ 8-61, 23 օգոստոս 1847:

ամիրայներ եւ անոնց յանձնեց Սուլթան Մէճիտի տուած այն Հրովարտակը, որով կը հրամայուէր Հայոց հաստատել երկու ժողով հոգեւոր եւ գերագոյն անուններով³:

Տող. 456:

“Եւ յառաջ Իստէնէ՛ Ուր ծովս է մտեալ՝ ի ծոցն այն:”

Էմիրկէնէն անմիջապէս յետոյ ծովածոց մը կը բացուի, որուն մէկ ափին վրայ հայեր բնակութիւն հաստատած էին անցեալ դարու կէսին: Ծովախորշին մէջ գտնուած նաւարանին մէջ աշխատողներ էին անոնք, որոնց համար 1857ին Միսաք Ամիրայի թողած դրամով կը կառուցուի փայտաշէն մատուռ մը Ս. Կարապետ անուն², որ այժմ գոցուած է բոլորովին եւ գոյքերը փոխադրուած Եէնի գիւղի եկեղեցին:

Տող. 457.

“Պարտեզը դարպասը մեծատանց՝ Մինչ ի գիւղն Եէնիքէոյ կոչման: Ի գիւղս տաճիկը մին մասն՝ Փոքր են հայք, բայց յոյն յոլով կան:”

Վերին Վասփորի նշանաւոր գիւղերէն է Եէնիքէոյ (Նոր-Գիւղ), ուր Հայերը քիչ են կ'ըսէ Երեմիա, եւ եկեղեցիի խօսք բնաւ չ'ընեն: Հոն ունինք սակայն Ս. Աճաճին անուն սիրուն եկեղեցի մը, որ կ'ենթադրեմ թէ պէտք է հիմնուած ըլլայ 1800 դարու երկրորդ կիսուն, քանզի Հ. Ղ. Ինձիճեան 1794ին կը գրէ անոր մասին, երբ կը հասնի Եէնիքէոյ³,

“Սուրբ Աստուածածին՝ մեր եկեղեցին, Գերեզմանատուն՝ առնթեր նըմին, Անդ աղբիւր ազգիս՝ յանդիման նորին, Էրմէնի չէճմէ՛ ծայնեալ առ տաճիկին:”

* * *

Սարգիս Գպիր Սարաֆ Յովհաննէսեան ալ իր տեղագրութեան մէջ այս առթիւ կը տողէ հետեւեալը,

“Եէնիքէոյ կոչի յունարէն Նէօխորիօն այսինքն նորագիւղ. եկեղեցին հայոց յայսմ

¹ Հայաստան, Ա. տարի, թիւ 47, Կ. Պոլիս, 17 մայիս 1817:
² Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցի, 1901, էջ 244:
³ Ամարանոց Բիւզնդեան, Վ. Ենեակի 1794, էջ 157:

գեղջ՝ է յանուն Սուրբ Աստուածածին, եւ մօտ եկեղեցւոյն է եւ գերեզմանատունն հայոց. եւ մերձ ի նա աղբիւր մի, զոր շինեալ է կուսան օրիորդ մի՝ ի հայոց ազգէն: Եւ նշան Սրբոյ խաչին կայ դրոշմեալ ուր եւ նշան Սրբոյ խաչին կայ դրոշմեալ ի նմա. եւ յայն սակս կոչի Էրմէնի Զէշմէսի (Հայ աղբիւր):”

Եէնի գիւղի այս եկեղեցին կը վերաշինուի 1834 յունիս 24ին եւ կ'օծուի Աղաւնի Ստեփանոս պատրիարքին օրով¹. Եւ տարիներու ընթացքին կրելով երբեմնակի նորոգութիւններ կը մնայ կանգուն մինչեւ այսօր:

Ունի իւր երկսեռ վարժարանը որ Մամիկոնեան անունը կը կրէ:

* * *

Թ. Է. Ինձիճեան եւ թէ Սարգիս Գպիր կը յիշատակեն թէ Գերեզմանատան քով եղած աղբիւր մը, զոր շինած է եղբր հայ օրիորդ է մը: Այժմ այդ աղբիւրը գոյութիւն չունի եւ կ'երեւի թէ քանդուած է այն, թէեւ Գերեզմանատունը եկեղեցիին ետեւը բարձունքի վրայ կը կենայ: Հոն թաղուած են պետական կարեւոր պաշտօնեայ Վահան Էֆ. Արզուման եւ Ենովք Տէմիրճիպաշեան՝ հօբեղայր ծանօթ գրագէտ եղիա Տէմիրճիպաշեանի:

* * *

Այս գիւղին մէջ կաթոլիկ հայերն ալ ունին խիստ սիրուն եկեղեցի մը քովն ալ երիցատուն, զոր 1866ին կառուցած է Թնկրեան Յովհաննէս Ամիրայ իբրեւ դամբարան իւր Գերեզմանին, որուն հանգուցեալ անդամները բոլորն ալ կը հանգչին հոն:

Այս եկեղեցիին հողը նուիրած է Յովհաննէս Գույումճեան որ նոյնպէս թաղ ունի պարտեզին մէջ իր Գերեզմանատան համար:

Այս եկեղեցիին մեծաւոր-ժողովրդապետը եղած է երկար տարիներ Վիեննական Միտիթաբեան Հ. Եփրէմ Զաքարեան, որ եկեղեցիին կառուածներն ալ ոչ միայն խնամով մատակարարած է, այլ եւ շատցուցած է անոնց թիւը:

* * *

Նշանաւոր հայերու, ամիրայներու ամառանոցը հոս եղած է. հոն ապրած են Թնկրեաններ, Գույումճեաններ, Տատեաններ, Արզումաններ, Տէմիրճիպաշեաններ եւ ուրիշներ:

¹ Օրմանեան Ազգապատում, Հատոր Գ., էջ 3713:

Ճեղայիրեան Մկրտիչ ամիրայն ունէր հոն իր ծովեղերեայ շէնք ապարանը, որ կործանեցաւ դժիւմ բախտին հարուածներէն¹, եւ որ վերաշինուեցաւ տարիներ առաջ եւ եղաւ Աստուածատուն ամարանային Գեսպանատուն, ինչպէս 1854 յունվար 17ին ալ Սարտենիոյ զօրապետներուն տրուած էր՝ ի բնակութիւն²:

Հոն ունէին նաեւ Տիւզեանք իրենց ամառանոցը որուն պատուհաններէն կախուեցան (կը գրէ Ա. Պերպլեան³) Միքայէլ եւ Մկրտիչ Տիւզեան Զէլէպիները 1819 հոկտ. 1ին⁴:

Այս գիւղին մէջ 1891 սպտ. 7ին գտաւ իր եղերական մահը նախարար Յակօբ բաշա Գաղաղեան⁵:

Տող 474: — “Տառապիէն: Այժմ Թերապիա կոչուած յունարնակ գիւղը, որ Եէնիքէոյէն անմիջապէս յետոյ կու գայ: Եւրօպական տերութիւններու ամարանոց — Գեսպանատունները կան հոն ծովեղերին մէկ ծայրէն նատունները կան հոն ծովեղերին մէկ ծայրէն — միւր. իսկ բարձունքին վրայ կը գտնուի հայ — քաթոլիկ “Ս. Անտոն” սիրունակ եկեղեցին, զոր 1871ին կառուցած է մեծանուն բարերար Անտոն Յովսէփ Թնկրեան:

Եկեղեցիին ճակատը կը կրէ հետեւեալ 4 տող վերտառութիւնը:

“1871 Կառուցաւ եկեղեցիս յանուն Սրբոյն Անտոնի Արղեամբը անուանակցի իւրում Անտոնի Յովսէփայ Թնկրեան:”

Տող 475 եւ 476.

“Ի այլ յառաջ տես ըզդարպաս Սա էր եղբայր Անտոնին Ո՛չ վայելեաց եղև ընդունայն:”

Տող 475 եւ 476.

“Ի այլ յառաջ տես ըզդարպաս Սա էր եղբայր Անտոնին Ո՛չ վայելեաց եղև ընդունայն:”

¹ Պատ. Ժամանակագիր, Հ. Միսաք Ա. Նորիսանի, մասն Բ., Վ. Ենեակի 1896, էջ 298:
² Պատ. Հայոց. Ա. Պերպլեան, էջ 587:
³ Ազգ. 455:
⁴ Ծանօթագրութիւններու 294 էջին վրայ գրած էմ. հետեւեալով Ստ. Պափազեանի, թէ Տիւզեանք կախուած են իրենց Գույումճեան պատմութիւնը, մանաւանդ Կ. Պոլսոյ Աւետիս Պերպլեանի պատմութիւնը, մանաւանդ Կ. Պոլսոյ Քրանսական Գեսպանատան թարգման J. M. Jouanninի 1830ին Revue des Mondesի (էջ 415) մէջ գրած մէկ նախապէս կը հաստատէ թէ անոնք Եէնի-քիւլի ծովեղերեայ տունին պատուհաններէն կախուած են: Տ. Ա. Յ. Թ. 1906, էջ 67:
⁵ Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցի, 1905, էջ 89 եւ 1906, էջ 67:

